ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2021թ. թիվ 364-Ա

ԶԱՎԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի 07.07.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետը և հաշվի առնելով Զ.Խաչատրյանի 15.07.2021թ. բացատրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու և ներքին աուդիտորական հաշվետվության մեջ արձանագրված խախտումների համար «ՀՀ Լոռու մարզի Դեբեդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Զավեն Խաչատրյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. «ՀՀ Լոռու մարզի Դեբեդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Զ.Խաչատրյանին՝

10-օրյա ժամկետում վերացնել հայտնաբերված խախտումներն ու թերությունները և արդյունքների մասին ներկայացնել տեղեկատվություն:

3. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

7/16/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. հուլիսի 16
ք.Վանաձոր